



10. ԶՈՓՉԻ

Ավալ ժամանակին ըլնում ա շիլնում մի Զոփչի: Էս Զոփչին հենց ինքն ա ըլնում, մի կնիկ. ո՞նչ տղա, ո՞նչ աղջիկ, ո՞նչ մեր, ո՞նչ քիր, ո՞նչ աղպեր, մախլաս ըսկի զադ շի ունենում՝ մարդ ու կնիկ են ըլնում, իրանց շոր գլուխուր:

Էս մեր Զոփչու բան ու փեշակը հենց էս էր. ասսու իրան-օրը, դեռ լիսն ու մութը շրաժանված, վե կկենար, պարանը վե կուներ, կէթար հանդը շոփ կիտելու, իրիկունը կգար տուն: Ընենց էլ մի զուկում շոփ կիտող էր, որ հանդումը մի շոփի կտոր էլա չէր թողա, որ զշերը տանեն իրանց հմար բում շինեն, յա՛ մի ճամփորդ ուստ գալիս, ցուրտ վախտը մի քանի շոփ էլա հավաքեր, բերեր վառեր, տաքանարի:

Օրեն մի օրը էս Զոփչին էլի վեր ա կենում, պարանը քցում ուաը, էթում հանդը, ճամփին սրան մի Օձ ա ուստ գալի:

— Բարո՛վ, Զո՛փչի աղպեր,— ասում ա:

— Բարո՛վ, հաղա՛ր բարին,— ասում ա,— Օ՛ձ աղպեր:

— Ախար ըսենց բա՞ն կըլնի,— ասում ա Օձը,— էլ աշխար-քումը շես թողում՝ հավաքում ես. ջանավա՞ր ասես, զո՞ւշ ասես՝ քոմմա քեզանից գանգատավոր են:

— Ի՞նչ անեմ, Օ՛ձ աղպեր,— ասում ա,— քյասիր մարդ եմ, իմ ապրուստն էլ դրանից ա. Էթում եմ հավաքում, բերում ծախում, տում, տեղ, օղլուշաղ պահում: Ուրիշ փեշակ էլ շունեմ, որ ասեմ հա-

— Լա՛վ,— ասում ա Օձը,— որ քյասիր ես՝ մի բան ասեմ ան-կաշ կա՞նես:

— Խի՞ չեմ անի, Օ՛ձ աղպեր, ասա՛ տենամ:

— Հրեդ վե կալ դագանակդ, — ասեց, — տո՛ւ, զլովս շընջխա՛.
Աննա մի քիլ զլխիս դհիցը կտրա՛, մի քիլ պոշիս դհիցը, դեն քցա՛,
մնացածը վե կալ տա՛ր ձեր հայաթումը մի դրաղ տեղ ֆորա՛, վրեն
էլ մի լավ մատուռ կապա՛: Մի քանի ամսեն վրա, — ասեց, — էդ
մատոի միջին մի նոան ծառ դուս կցա, բքա-եքա նոներ կտա. հենց
որ նուոը պոկես, բերես տապակ անես՝ կտենաս միջին ակն ու
մարգարիտ¹, մարզան ու հազար մի ջուռա անգին քարեր: Կտա-
նես քեզ հմար կծախես, կհարստանաս, մըկ էլ չես գա ըստերանք
բյասիբ-բյուսուրի ոռուղը կտրի:

— Զէ՛, Օ՛ձ աղպեր, — ասաց Զոփշին, — էդ գլուխ գալու բան
չի, ի՞նչ ասես՝ կանեմ, էդ՝ չէ Քյասիր եմ, բյասիր՝ դո՞ւ ինչ անես:

— Քե՞զ ինչ, ա՛ղպեր, — ասեց Օձը, — ի՞նչ ասում եմ՝ արա՛.
Դու հո իմ զլխի վերիլը չե՞ս:

Զոփշին աղաք չէր հավատում, վախում էր չըլնի՛ թե շանթի.
Համա տեհավ որ չէ՛, շատ ա զոռում, էլ թամաշ շարեց. վե կալավ
դագանակը, տվեց Օձի գլովսը շընջխեց, մի քիլ զլխի դհիցը կրտ-
րեց, մի քիլ պոշի դհիցը զեն քցեց, մնացածը բերեց տուն, հայա-
թումը մի դրաղ տեղ ֆորեց, ոնց որ ասել էր՝ վրեն էլ բերեց մի
լավ մատուռ կապեց:

Անց կացավ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, օրեն մի օրը
վե կացավ գնաց ակը տալու Գնաց ի՞նչ տեհավ՝ զո՞րթ որ, մատոի
միջին հրեն մի նոան ծառ. վրի նոանն էլ հո՛ հալ ու հեսար չկատ:

Ասեց. — Տենամ միջին զադ կա՞ թե չէ:

Մի հատ քաղեց, տապակ արեց՝ ի՞նչ նուոը, քոմմա ակն ու
մարգարիտ, մարզան ու հազար մի ջուռա անգին քարեր:

— Փա՛ռքդ շատ ըլնի, — ասեց, — աստո՛ծ, էս հետ ինձ հաս-
ցըրիր՝ լա՛վ հասցըրի. ախտար ես մեռա էսքամ տարի շոփշություն
անելոն, ձեռն զա՞դ շընկավ:

Ուրախությունիցը էդ գշեր Զոփշու քոմմը չի տարե, սաղ գշեր
խեղճը բաց աշքով ա լիսացըրե:

Առավոտը գշերով-գշերհանա վե կացավ, նուոը վե կալավ,
զրեց շերը, տարավ բազար, որ ծախի: է՛ս զարգյարի կուշտը, է՛ն

¹ Տպագիր տեհստում հաջորդում է՝ Թոլիանա, որը բանահավաքի ձեռքով
լնչված է (Ս. Կ.):

զարգյարի կուշտը, դե՛ս տարավ, դե՛ն տարավ՝ առնող չէլավ։ Վեր-
ը որ շատ ման էկավ, մի ջնուդ զարգյար ուստ էկավ։

— Ա՛ղպեր, — հարցրեց, — էդ ի՞նչ ես ծախում։

— Ակն ու մարգարիտ, — ասեց։

— Հատը ո՞նց ես տալի։

— Հենց ո՞նց որ ուզում ես։

— Հատին հազար մանեթ տա՞մ։

— Տո՛ւ, — ասեց, — տա՛ր խերը տեսում էր իմանում, թե վրեն ծիծաղում աւ։

Ջնուդն անխոս հանեց, հատին հազար մանեթ համբրեց, ձեռիցն առավ։

— Սրանից է՞լ ունես, — հարցրեց, — թե հենց էս աւ։

— Հենց ի՞նչքամ ուզում ես, — ասեց, — որ բերեմ կա՞ռնես։

— Կառնեմ, — ասեց ջնուդը, — խի՞ շեմ առնի։

Ջոփշին ուրախ-ուրախ տում ա գալի, մնացած նոներից մի քանի հատ էլա պոկում, տապակ անում, քարերը հանում, բերում էդ ջնուդի վրեն հատը հազար մանեթով սաղացնում։ Մի՛ն, է՛րկու, չի՛նդ, տա՛սը՝ ըսենց հարստանում ա, եքա փողի, մըլքի տեր դառնում։

Խալիքը մնացել ին միտք անելոն, թե էս խեղճ, քյասիր, ան-
ճար, օրեն հացի մուրացկան Ջոփշին ոնց հարստացավ, էսքամ մա-
ու դոլվաթի տեր էլավ։

Էդ քազարումը մի շատ հարուստ բեզրզյան ա ըլնում։

Էս բեզրզյանը ինքն իրան միտքն ա անում. ՇԱ՛ղպեր, — ասում
ա, — էս մարդը էրեկվա Ջոփշին չէ՞ր, որ պարանը վեր էր ունում,
էթում հանդը չոփ կիտելու. հմի էսքամ մալ ու դոլվաթը, հարստու-
թյունը ո՞վ տվեց սրան, չոփչությունով հո շաշխա՞տեց։ Կա շկա, —
ասում ա, — ըստե մի բան կա. ո՞նց որ ըլնի, ես պտի իմանամ-
կա՛վ։

Մարդ ա դրկում, մի պառավ կնիկ ա կանչիլ տալի կուշտը։

— Ա՛յ բաշի, — ասում ա, — էն Ջոփշուն հո ճանա՞նցում ես, որ
հմի էսքամ հարստությունի, մալ ու դոլվաթի տեր ա դառնի։

— Լա՞վ, շատ լա՞վ եմ ճանանցում, բեզրզյա՞նը սաղ ըլնի, —
ասում ա պառավը։ Խի՞ որ, ի՞նչ ես անում։

— Զե՞ս կարա մի ֆանդով իմանա, տենանք էսքամ հարստու-
թյունը, մալ ու դոլվաթը նրան ո՞վ ա տվե։

— Խի՞ շեմ կարա, — ասում ա, — դրանից էլ հեշտ բա՞ն:

— Քեզ տենամ, հը՝, բա՛չի, որ իմացել ես, հենց ինչ ուզես՝

կտամ:

Էս ջադուքյար պառավն ա՝ քնձրոտ-մնձրոտ, ճղված-ճոթոած շորեր ա հագնում, վե կենում, էթում դուզ Զոփշու տոմք:

— Ի՞նչ բանի հմար ես էկե, — հարցնում ա Զոփշին:

— Խեղճ անտեր, անտիրական կնիկ եմ, — ասում ա, — ի՞նչ կը լինի ձեր արևի սաղաղին մի կտոր հաց տաք՝ պահեք. ես էլ աղաք-ներիդ ղուլուղ կանեմ՝ ջուր կրերեմ, ավիլ կանեմ, մախլաս, ինչ որ ձեռիցս կգա՝ կանեմ:

— Լա՛վ, — ասում են մարդ ու կնիկ, — զաթի մընք էլ քեզ նման կնկա ինք ման գալի, որ էփի, թափի, լվանա, մեր տան բանն անի: — Վեր են ունում, վարձրի խաթեր իրանց տանը պահում:

Անց ա կենում մի վախտ, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, էս պառավը ընե՞նց մի լավ ղուլուղ ա անում, ընե՞նց մի ժաժ գալի, նստում, վե կենում, որ Զոփշին, իրա կնիկը սրան շատ սիրում են. մի խոսքով, իրանց հալալ մորը էնքամ շին ուղի, ինչքամ սրան ին ուզում: Ըսենց նրանց աշքը մննելուց եղը, օրեն մի օրը, Զոփշու կնկանը որ մենակ ա քցում, կպնում ա յախին:

— Խա՛նում ջան, — ասում ա, — քեզ ուզում եմ մի բան հարցնի, համա քաշվում եմ:

— Խի՞ ես քաշվում, ա՛յ բաշի, ասա՛. ասա՛ տենամ ի՞նչ ես ուզում:

— Խա՛նումը սաղ ըլնի, — ասում ա պառավը, — ես ուզում ի հարցնեմ, տենամ՝ էսքամ հարստությունը, մալ ու դոլվաթը ձեզ որդիան ա. ի՞նչքամ միտք եմ անում, միտք եմ անում, խելքս շի հասնում, թի ասեմ էսքամն էլ աշխատել եք, ըսկի ավատալու բան շի. ասեմ՝ գտել եք, ըստ էլ շիլնի: Մախլա՛ս. կա՛, չկա՛ ըստե մի բան կա. դու արի՛, խա՛նում ջան, դրուստն ասա՛: Ես էլ գիտաք, որ ձեր մերն եմ, չեմ էթա մեր սըռը խալխին ասի:

Զոփշու կնիկը աղաք շեմ ու չում արեց, ուզեցավ չասի, համա տեհավ, որ շատ ա դեմ ընկնում, նստեց մին-մին, տեղը-տեղին նազլ արեց:

— Ա՛յ բաշի, — ասեց, — բա լե՞ս ասի, մեր քյասիք վախտը, մի օր մարդս էթում ա հանդը չոփ կիտելու, ճամփին նրան մի օձ ա ուստ գալի. «Զոփշի աղպեր, — ասում ա, — ըտենց հո շի՞նի,

Հանդումն էլ շոփ շես թողում՝ հավաքում ես. խեղճ դշերի ոռողջն էլ ես կտրումք: «Ի՞նչ անեմ, Օ՛ձ աղպեր,— ասում ա մարդս,— ես էլ խեղճ եմ, անճար եմ, դրանով եմ ապրուստ անումք: «Բայս որ ըտենց ա,— ասում ա Օձը,— տո՛ւ, ինձ սրպանա. մի քիչ զլխիս դհիքը կտրա՞’, մի քիչ պոշիս դհիքը, մնացածը տար ձեր հայաթումը ֆորա՞’, վրեն մատուռ կապա՞’: Մի քանի ամսեն վրա,— ասում ա,— կգաս, կտենաս էդ մատոփ միջին նռան ծառ ա դուս էկե, երա-եքան նոներ ա տվի: Հենց որ նուռը քաղես, տապակ անես, կտենաս մեջը լիքը ակն ու մարդարիտ, մարզան ու հազար մի ջուռա անդին քարեր: Կտանես,— ասում ա,— կծախես, մըն էլ շես դա ըստերանք շոփ կիտիք: Մարդս էլ քաշում ա դագանակը, տալի Օձին սրպանում, մի քիչ զլխի դհիքը կտրում, մի քիչ պոշի դհիքը՝ դեն քցում, մնացածը բերում մեր հայաթումը ֆորում, վրեն էլ մի լավ մատուռ կապում: Անց կացավ մի վախտ, բա չե՞ս ասի, ա՛յ բաշի, ինչ որ Օձն ասել էր՝ մին-մին, տեղը-տեղին կատարվեց: Հրենիկ տե՞նում ես էն մատուռը,— մատով շանց ա տալի,— նռան ծառը էդ մատոփ միջին ա. վրի նռանն էլ հո՛ հալ ու հեսար շկա. ինչքամ քաղել ենք ծախե, քսան էնքամ էլ դեռ կենում ա: Հմի տե՞հար, ա՛յ բաշի, ո՞նց ենք հարստացեն:

— Տեհա՛, խա՞նում ջան, տեհա՛. աստոծ ձեր մինը հազար անի, ո՞վ շի ուզի:

— Համա լրինեմ-շիմանամ, ա՛յ բաշի, էթաս սրան, նրան ասես, հա՞՛, թե չէ էլ մարդիս ձեռիցը շեմ պըծնի՛ մահս կտա¹:

— Զէ՛, խա՞նում ջան, ես հո էրեխա շեմ, էթամ մեր սըռը խալին ասեմ:

Համա ո՞րդե. հենց հեզսի օրը, ինչ որ լսել էր, փեշումը կուլեց, զնաց բեղրգյանին խաբար տվեց:

— Բեղրգյա՞նը սաղ ըլնի,— ասեց,— բա չե՞ս ասի՛ ըսե՞նց, ըսե՞նց բան:— Նստեց մին-մին, տեղը-տեղին նաղլ արեց:

— Լա՛վ, — ասեց բեղրգյանը, — հմի ե՛ս գիտամ, նա՞:— Հա-նեց պառավին մի գոգ ոսկի տվեց՝ ճամփու դրեց:

Անց կացավ մի քանի վախտ, օրեն մի օրը, վե կացավ զնաց Չուփու կուշտը:

¹ Տպագիր տերստում՝ կրուրացնի, կրողա. ուղղումը բանահավաքինն է (Ա. Կ.):

— Բարով, Զո՞փշի աղպեր, — ասեց բեզրոյանը:
— Բարով, հազա՞ր բարին,
— Զո՞փշի աղպեր, քեզ մի բան եմ ուզում հարցնի, համապտի զրուտն ասես, հա՞՝
— էրկուսը հարցրա՛, բեզրոյա՞նը սաղ ըլնի:
— Դու արի՛ զրուտ ասա՛, Զոփշի աղպեր, էսթամ հարստությունը, մալ ու գոլվաթը քեզ ո՞րդիան ա:
— Ո՞րդիան պտի ըլնի, — ասեց Զոփշին, — ճակատիս հալալ ըրտնբովն եմ աշխատե՞:
— Զէ՛, սո՞ւտ ես ասում, ուզո՞ւմ ես մարզ գանք:
— Լա՞վ, մարզ գանք. ընչի՞ վրեն:
— Հե՞նց ընչի վրեն ուզում ես:
— Թե գտար, — ասեց, — ես իմ տուն ու տեղը, մայ ու գոլվաթը քոմմա քեզ տամ. թե չէ հո՛, զո՞ւ քունը ինձ տաս: Ռա՞զի ես:
— Ռա՞զի եմ, աղպեր, ռազի եմ: Դե արի էթանք մի քանի մարդ էլ կանչենք շհադ, որ մարշը մարշ ըլնի, ո՞նչ ես խոսքից եդ դառնամ, ո՞նչ դու
— Լա՞վ, էթա՞նք:
Վեր են կենում, էթում մի քանի մարդ էլ կանչում, բերում ընդեշադի կանացնում:
— Դե հմի ասա՛, բեզրոյա՞նը սաղ ըլնի, տենանք իմ հարըստությունը ո՞րդիան ա:
— Զեր հայաթումը, — ասում ա, — մի մատուր կա, մատուրիշին՝ մի նուան ժառ...
— Լա՞վ, լա՞վ, լա՞վ. էլ մի՛ ասի, — խոսքը կտրում ա Զոփշին, — տա՞րաբ: Ինչ ունեմ-չունեմ՝ տո՞ւն, տե՞ղ, մա՞լ, դոլվա՞թ քոմմա քեզ. տա՞ր, մորդ կաթի նման քեզ հալալ ըլնի. ես կէթամ էլի աղաքվա նման չոփշություն կանեմ: Փա՞ռք ասուր ողորմությունին, ոնց որ տվեց, ընենց էլ առավ:
Ասում ա ու կնկա կուրը բռնում, տանիցը լափ դարտակ դուս գալի, էթում մի քնձրուտ-մնձրուտ տուն, քրեհում, միշին կենում:
Էլ էն Զոփշին, էլ էն Զոփշին: Առավոտը լիսը բացվում էր թե չէ, պարանը քցում էր ուսը, էթում հանգը չոփ կիտելու, իրիկունը գալի տուն: Ասենք կնիկը եննա զլխի ա ընկնում, որ ըստոնք քոմմա էն քավթառ պառավի բաներն ա, համա վախլությունիցը մարդին չի ասում, անսաս իրա հմար տաղ ա անում, մնում:

Ըսենց անց ա կենում մի շարաթ, էրկու շարաթ, մի ամիս, էրկու ամիս՝ օրեն մի օրը էս մեր Չոփշին ինքն իրան միտքն ա անում. «Աղպեր, — ասում ա, — ըսենց բան չիլնի. ես պտի վե կենամ էթամ ասսու կուշտը գանգատ, մի տեսամ ես ի՞նչ մեղքի տեր ի, որ էսքամ մալ ու դոլվաթը տվեց՝ էլ եղ ձեռիցս առավ»:

Էթում ա կեկա հեննա ա մասլահաթ տենում: Կնիկն էլ, թե. — Դու զիտաս, ա՛յ մարդ, էթում ես՝ զնա՛:

Չոփշին ա՝ մի բանի ամսվա պաշար ա վեր ունում, փետն առնում ձեռը, ընկնում ճամփա՝ դպա ասսու կուշտը: Էթում ա էթում, շատն ու քիշն աստոծ զիտա, մի մեշի միշի սրան էրկու վիրունի դարթիր ա ուստ դալի: Տենում ա էրկսի մեջքն էլ յարա-փարեն կոխել ա:

— Բարո՛վ, — ասում ա Չոփշին:

— Բարո՛վ, Հազա՛ր բարին: Ի՞նչ մարդ ես, — Հարցնում են զաթրները:

— Ես ֆլա՛ն Չոփշին եմ, — ասում ա:

— Բա էդ ո՞ւր ես էթում:

— Էթում եմ ասսու կուշտը գանգատ:

— Որ էթում ես, ի՞նչ կրինի մեր դհիցն էլ գանգատ անես: Էս տասը տարի՝ մեր մեջքը յարա-փարեն կոխել ա. ի՞նչ դեղ, զարման անում ենք, լավանալու ճար, իլլաճ շիլնում: Մի Հարցրա՛, տես մենք ի՞նչ մեղքի տեր ենք, որ աստոծ մեզ ըսենց պատճել ա:

— Ա,քիս վրեն, — ասում ա, — կասեմ:

— Աշքդ վարդի վրեն, — ասում են զաթրները:

Էս մեր Չոփշին ա, սրանց տալիս ա անց կենում, թողում էթում էլ եղ իրա ճամփեն: Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիշն աստոծ զիտա, Հասնում ա մի քաղաք: Էս քաղաքի միջովը անց կենալիս տենում ա էրկու սիրուն, նա՛շինում, արեգակի կտոր աղջիկ:

— Բարո՛վ, — ասում ա Չոփշին:

— Ա՛յ բարո՛վ, ասսու Հազա՛ր բարին, խերին: Ի՞նչ մարդ ես, — Հարցնում են աղջկեքը:

— Ես ֆլա՛ն Չոփշին եմ, — ասում ա:

— Բա էդ ո՞ւր ես էթում:

— Էթում եմ ասսու կուշտը գանգատ:

— Որ էթում ես, — ասում են, — ի՞նչ կըլնի մեր դհիցն էլ գան-

գատ անես: Մեր հերը լավ հարստությունի, լավ մալ ու դոլվաթի տեր ա, մընք էլ, տենում ես, էսքամ սիրուն, էսքամ նաշխուն, ի՞նչ անես՝ մեզանից գեշերը մարդի են էթում, մենք ըսենց մնացել ենք տանը, Մի հարցրա՛ տես մե՛ր ճարն ինչ պտի ըլնի:

— Հա՛վ, — ասում ա, — ձեր գանգատն էլ տեղ կհասցնեմ:

Ասում ա, տալի անց կենում, էթում: էթում ա, էթում, շատն ու քիշն աստոծ գիտա, մի եքա անտուտ, անտակ ծովի առասո զալի: Տենում ա էդ ծովի միշին մի դուշ կաննել ա, սաղ ծովը փորն ա քաշում էլի չի կշտանում, հարա՛յ-մադաթը քցում ա. — Ամա՞ն, ասսո՛ւ սիրուն, ես ծարակլ մեռա՝ մի պուտ չը՛ւր:

— Բարո՛վ, — ասում ա Զոփիին:

— Բարո՛վ, հազա՛ր բարին, հողածին: Ի՞նչ մարդ ես, — հարց-նում ա դուշը:

— Ես ֆլա՛ն Զոփիին եմ, — ասում ա:

— Բա էդ ո՞ւր ես էթում:

— Էթում եմ ասսու կուշտը գանգատ:

— Որ էթում ես, — ասում ա, — ի՞նչ կըլնի իմ գհիցն էլ գան-գատ անես: Ես էսքամ տարի էս ծովի միշին կաննած՝ սաղ ծովը փորս եմ քաշում, էլի չեմ կշտանում. մի հարցրա՛ տե՛ս իմ ճարն ի՞նչ պտի ըլնի:

— Զո՛վստ աշքիս վրեն, — ասում ա, — քու գանգատն էլ տեղ կհասցնեմ:

Տալիս ա անց կենում, էթում էլ եդ իրա ճամփեն, էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիշն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, մի շարաթ, էրկու շարաթ, վերջը դուս ա գալի¹ աշխարքի անծերը: Տենում ա ընդե սիպտակ միրքով մի ծեր, գզզված մարդ հրեն թախտի վրեն բազմել ա: էթում ա զրան գրուս տալի:

— Բարո՛վ, ա՛յ բարի, — ասում ա Զոփիին:

— Բարո՛վ, հազա՛ր բարին: Ի՞նչ մարդ ես, — հարցնում ա հալիվորը:

— Ես ֆլա՛ն Զոփիին եմ, — ասում ա:

— Բա էդ ո՞ւր ես էթում:

— Էթում եմ ասսու կուշտը գանգատ:

¹ Տպագիր տեքստում՝ «...մի օր, երկու օր, իրեք օր, մախլասի մի շարար, տալիս ա դուս գալի...». Խմբագրումը բանահավաքինն է (Մ. Կ.):

— Աստոծ հենց ես եմ, որ տենում ես. ասա՛ տենամ գանգատդին ա:

Չոփշին էս լսեց թե չէ, էն սհաթը ընկավ ասսու ոնները:

— Տե՛ր աստոծ,— ասեց,— ես մի խեղճ, դառն աղքատ ի, ամեն օր պարանը վեր ի ունում, էթում հանդը շոփ կիտելու, իրի-կունը զալի տուն: Ըսենց մարդ ու կնիկ քարի հեննա քաղվելոն, ավազի հեննա մաղվելոն, զունդ-զունդ անելոն յուա ինք էթում: Օրեն մի օրն էլ, վեր ի կացե զնացե ցախի, ճամփին մի Օձ ուստ էկավ: «Չո՛փի աղպեր,— ասեց,— հերիթ չի» դու էս հանդի շոփերը կիտես, տնաշշեն, խեղճ զշերի ոռողջն էլ ես կտրում, որ տանեն իրանց հմար բուն շինենա: Ի՞նչ անեմ,— ասեցի, — բյասիր մարդ եմ, ես էլ դրանով եմ ապրում: «Բաս որ ըտենց ա, — ասեց Օձը, — դադանակդ վե կալ, տո՛ւ զլովսս ջընջխա. Եննա մի քիլ զլսիս դհիցը կտրա՛, մի քիլ պոշիս դհիցը՝ դեն քցա՛, մնացողը¹ տար ձեր հայաթումը մի դրազ տեղ ֆորա՛, վրեն էլ մի լավ մատուռ կապա՛: Մի քանի ամսեն վրա,— ասեց,— էդ մատոի միջին մի նուան ծառ գուս կդա, եքա-եքա նոներ կտա. Հենց ո՛րը քաղես, տապակ անես՝ կտենաս մերը լիբը ակն ու մարգարիտ, հաղար մի քուտա անդին քարեր: Կտանես կծախսես, — ասեց, — կհարստանաս, մըկ էլ շես զա ըստերանք շոփ կիտիհա: Ես էլ նրան անկաջ արի, դագանակով տվի զլովսս ջընջխեցի. ոնց որ ասել էր, ընենց էլ արի, տարա մեր հայաթումը ֆորեցի, վրեն էլ մի լավ մատուռ կապեցի: Դո՛րթ որ, Օձը ոնց որ ասել էր, մին-մին, տեղը-տեղին կատարվեց: Հարբարացա, լավ մալ ու դոլվաթի տեր դառա, համա վերջը շեմ գիտա ոնց էր էիս, մեր քաղաքումը մի բեկրդյան կա, էս բանը իմացիլ էր. էկավ հեննես մարզ էկավ՝ տարավ: Ինչ ունեի, շունեի՛ տո՛ւն, տե՛ղ, մա՛լ, դոլվաթի, քոմմա տվի նրան, կնկանս կուռը բռնեցի, թողի տանիցս լա՛փ դարտակ դուս էկաս: Էլա էլ էն Չոփշին, էլ էն Չոփշին, ամեն օր պարանը վեր ի ունում, էթում հանդը շոփ կիտում, բերում՝ սըթար ինք անում: Ըսենց մի քանի վախտ անց կացավ, օրեն մի օրը միտք արի, ասեցի՝ էթամ ասսու փեշը բըռնեմ, հարցնեմ տենամ ես ի՞նչ մեղքի տեր ի, որ էսքամ հարստությունը, մալ ու դոլվաթը տվեց՝ էլ եդ ձեռիցս խլեց: Հմի էկել եմ ընկե քու ոնները: Տե՛ր աստոծ, բալի էլի դու մի լիս ու ճար անես:

¹ Տպագիր տեքստում՝ մնողը, ուղղումը մեր կողմից է (Ս. Կ.):

— Կէթաս էլ եղ ձեր քաղաքը,— ասեց աստոծ,— էն բեզրգաւնի հենամարշ կգասւ Կասես. «Արևը ո՞րդիան ա դուս գալիք: Կասի. ռշալըրա՞թ որ է՞ս դհիցը»: Կասես. «Զէ», է՞ն մի դհիցը. ուզո՞ւմ ես, արի մարշ գանքը: Որ մարշ էկար, էն վախտը ես արևը քու ասած դհիցը կհանեմ: Մարզը կտանես, մալ ու դոլվաթդ էլ եղ կգաքու ձեռք:

— Փա՛ռքդ շատ ըլնի,— ասեց,— տե՛ր աստոծ, ոնց որ հրամայեցիր՝ ընենց էլ կէթամ կանեմ: էդ հո էդ: Մի ուրիշ գանգատ էլ ունեմ: Ծամփին մի մեշի միշի ինձ էրկու զաթիր ուսստ էկան:— Ո՞ւր ես էթում,— Հարցրին: Ասեցի:— էթում եմ ասսու կուշտը գանգատ:— Որ էթում ես,— ասեցին,— ի՞նչ կըլնի մեր դհիցն էլ գանգատ անես: Էս տասը տարի՝ մեր մեջքը յարա-փարեն կոխել ա. ի՞նչ անում ենք, չենք անում՝ լավանալու ճար, իլյամ շիլնում: Մի Հարցրա՛ տես մեր ճարն ինչ պտի ըլնի:

— Ես նրանց ստեղծել եմ,— ասեց աստոծ,— որ մարդկերանցը պետքը գան, բեռ շալակեն, բան անեն, չէ թե տարեն տասնէրկու ամիս պարապ-սարապ մեշեքը շափշփեն: Ուզո՞ւմ են,— ասեց,— աղաք արա՛, տա՛ր ձեր քաղաքը, վրները փալան դի, բանացրա՛ ալբիալը մեշքների յարեն կլավանա:

— Էդ հո էդ: էկա, էկա, էկա՛ հասա մի քաղաք. ըտե էրկու սի՞րուն, նա՞շխուն, ակն ու արեգակ աղջիկ ուսստ էկան: Հարցրին. ոէդ ո՞ւր ես էթում: Ասեցի:— էթում եմ ասսու կուշտը գանգատ: Ո՞ր էթում ես,— ասեցին,— ի՞նչ կըլնի, մեր դհիցն էլ գանգատ անես: Մենք ըսենց լավ օշախից ենք, ըսենց էլ սիրուն, ոնց որ տենում ես, համա ինչ անես, մի հետ մեր քախտը կապվել ա, մնացել ենք տանը: Մի Հարցրա՛, տես մեր ախրն ի՞նչ պտի ըլնի:

— Էդ էրկու սիրուն աղջիկն էլ քո՛ւ զսմաթն ա,— ասեց աստոծ,— վե կունես, կտանես ձեր քաղաքը, ընդե մարդի կտաս:

— Էդ էլ հո էդ:— վրա բերեց Զոփչին:— Գալիս ճամփին մի անտակ ծովի ուսստ էկա. տեհա մի զուշ էդ ծովի միշին կաննել ա, սաղ ծովը փորս ա քաշում, էլի շի կշտանում՝ ձեն ա տալի. «Ամա՞ն, ասսո՞ւ սիրուն, էրվեցի, խորովկեցի, տապակվեցի՝ մի պուտ զո՞ւրս: Էս զուշն էլ իրա գանգատն արեց. ոէսքամ տարի ա, էս ծովի ջուրը սաղ փորս եմ քաշում, էլի ինձ կշտում չկա: Մի Հարցրա՛ ասսուն, — ասեց,— տենանք ես ի՞նչ մեղքի տեր եմ, յա իմ ճարն ի՞նչ պտի ըլնիք:

— Եղ դշի տեղը, — ասեց աստոծ, — Հենց էդ ծովն ա, որ կա, որ բնդիան բաց թողամ՝ արար աշխարքը բար ու բանդ, բրիշակ կանի: Ըսնեց էլ էկթաս կասես իրան:

— Տեր աստոծ, — ասեց Զոփին, — պրծա. Էլ գանգատ շունեմ: Ենինա ասսու ձեռը պաշեց, թողաց եղ դառավ էլ էն ճամփովը, որ ճամփով որ էկել էր:

Էկավ, էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ զիտա, հասավ էն անտակ ծովի ղրաղը:

— Չո՛փչի աղպեր, — հարցրեց ղուշը, — ասսում տե՞հար, իմ զանգատն արե՞ցիր:

— Հա՛, դո՛ւ աղպեր, տեհա, գանգատդ արեցի: Աստոծ ասեց, ոնրա տեղը հենց էդ ծովն ա, որ կա, ընդիան որ թողամ՝ արար աշխարքը բար ու բանդ կանի:

Ասեց, տվեց անց կացավ, էկավ, էկավ, էկավ, հասավ էն աղըկերանց բաղաքը: Հարց ու փորձ արեց, նրանց գտավ:

— Աստոծ լսեց ձեր զանգատը, — ասեց, — հրամայեց որ էրկրսիդ էլ տանեմ մեր բաղաքը ընդե մարդի տամ: Հմի ի՞նչ եք ասում, կզա՞ր էթանը:

— Կզանը, խի՞ չենք գա, — ասեցին, — ասսու հրամանն ա՝ ինչ կարանը ասի:

Վե կացան հեննեն էկան: Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ զիտա, մեշի միջին էն էրկու զաթիրը ուստ էկան:

— Չո՛փչի աղպեր, — հարցրին, — ասսում տե՞հար. մեր զանգատն արե՞ցիր:

— Հա՛, տեհա, — ասեց:

— Բա ի՞նչ ասեց:

— Ես նրանց ստեղծել եմ, — ասեց, — որ մարդկերանցը պետք գան, բեռ շալակեն, բան անեն: Ուզում են, — ասաց, — աղաք արա՛, տա՛ր բանացրա՛ մեջքների յարեն ալրիալը կլավանա: Է՛, կզա՞ր տանեմ:

— Կզա՞նը, խի՞ չենք գա, — ասեցին:

Չոփչին էն սհաթը զաթրների բերանը գյամ դրեց, մինը մի աղջկանը, տվեց, մինը մեկելին, նստեցին՝ ընկան ճամբա: Նստելու բաշտան՝ էրկու զաթիրի յարեն էլ ալրիալը սաղացավ:

Էս մեր Զոփին ա՝ էկա՛վ, էկա՛վ, էկա՛վ, շատն ու քիչն աստոծ զիտա, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի

ամիս, հասավ իրանց երկիրը: Սաղ քաղաքը շավ էլավ, թե Զոփշին էկել ա, հեննեն էլ էրկու սի՞րում, նա՛շուում, հուրի-մալաք աղջիկ ա քերե, որ տենողի խելքն ա էթում: Բեզրգյանը էս իմանում ա թե չէ, ալրիալը վեր ա կենում, էթում կուշտը:

— Բարո՛վ ես էկե, — ասում ա, — Զո՛փշի աղպեր, ամեն ճամփեդ սալամա՞թ: Էդ էրկու սիրում աղջիկը ո՞րդիան ա, — հարցնում ա, — չե՞ս ծախի առնեմ:

— Չէ՛, — ասում ա, — չե՞մ ծախի. որ քու սաղ մալ ու դոլվաթն էլ տաս՝ էլի շեմ ծախի: Ուզո՞ւմ ես, արի՛ էլի մարզ գանք:

— Լա՛վ, մարզ գանք, — ասում ա բեզրգյանը: — Ընչի՞ վրեն:

— Դու ինձ մի աղաք ասա՝ արևը ո՞ր դհիցն ա դուս գալի:

Բեզրգյանը մատով շանց ա տալի. — Հալրա՞թ է՛ս դհիցը, — ասում ա:

— Չէ՛, — ասում ա Զոփշին, — մարզ գա՞լիս ես, որ էգուց էդ դհիցը շդուս դա:

— Հա՛, մարզ եմ գալի:

— Ընչի՞ վրեն:

— Թե դո՞ւ տարար, իմ տուն ու տեղը, մալ ու դոլվաթը քոմմա քեզ. թե ես տարա՝ էդ էրկու աղջիկն ինձ: Լա՞վ:

— Լա՛վ, — ասում ա Զոփշին, — թող ըտենց ըլնի:

Հեգսի օրը, դեռ լիսն ու մութը շրաժանված մի քանի մարդի հեննա վեր են կենում, էթում են քաղաքիցը դուս:

— Բեզրգյա՞նը սաղ ըլնի, — ասում ա, — Լավ վարավուրդ արա, Հա՛, տե՛ս արևը ո՞ր դհիցն ա դուս գալի:

Ասսու հրամանով էդ օրը արևն էն դհիցն ա դուս գալի, որ դհիցը ամեն օր էր մննում: Թոմմա մնում են սառած, իրար էրեսի մտիկ անելոն: Բեզրգյանի հալը Հո՛ էլ միք հարցնի՝ սփրթնել ա, դպու պատի ծեփի:

— Հը՛, բեզրգյա՞նը սաղ ըլնի, — ձեն ա տալի Զոփշին, — տա՞րա, թե չէ:

— Տարա՞ր, ինչ կասեմ, տարա՞ր:

— Տարա՞ր:

— Տարա՞ր:

— Տարա՞ր, աղպեր, տարա՞ր: Ինչ ունեմ, շունեմ՝ տո՞մ, տե՞ղ, մա՞լ, դոլվա՞թ՝ քոմմա մորդ կաթի նման քեզ հալալ ըլնի:

— Զէ՛, բեղրդյա՞նը սադ ըլնի, — ասում ա Չոփշին, — քու հարստությունը ինձ հարամ ա կացե. ինչ որ դու ինձանից աղաք տարել ես՝ վե կունեմ, քունը քեզ ըլնի, չեմ ուղում:

Բայենց էլ անում ա. իրա հարստությունը, մալ ու դոլվաթը վեր ա ունում, բեղրդյանինը եղ տալի իրան: Չոփշին դառնում ա էլ էն հարուստը, էլ էն հարուստը:

Հեննեն բերած էրկու աղջիկն էլ՝ մինը թագավորի նազրի տղին ա տալի, մինը՝ վեղրի. օխտն օր, օխտը գշեր դափո՞վ, զուռնո՞վ, չափ բեփո՞վ, ուրախությո՞ւնով հարսանիք անում:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն ասողին, մինն ասիլ ավողին, մինն էլ անկաշ դնողին:



